

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 7.02.2019թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 30 (երեսուն) անդամից 23-ը (քսաներեքը):

Նիստին մասնակցում էին՝

1. **Սերոբյան Երվանդ Սերյոժի** — Ռեկտորի պարտականություններ կատարող
2. **Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
4. **Պողոսյան Բագրատ Ժորայի** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Մելքոնյան Հովիկ Սենեքերիմի** – Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
6. **Մկրտչյան Արթուր Վազգենի** — Ռազմական ամբիոնի պետ
7. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** -Գրադարան- ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն
8. **Հովհաննիսյան Արտաշես Ալեքսանի**– Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ
9. **Քալաջյան Ռաֆֆի Վաղինակի** — Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
10. **Սարգսյան Սամվել Հովհաննեսի** — ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
11. **Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր
12. **Դրմեյան Հենրիկ Ռուբենի** — Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
13. **Մարդոյան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր
14. **Մելիքյան Թամարա Հմայակի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
15. **Տեր-Աղամյան Շուշանիկ Վոլոդյայի** — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի ասիստենտ

- 16. Ղուկասյան Լուսիկ Հենրիկի**— Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
- 17. Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու
- 18. Սարգսյան Արմենուհի Հակոբի** — ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
- 19. Մարտիրոսյան Լևոն Մովսեսի** — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ
- 20. Խաչատրյան Աննա Արմենի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Սոցիալական աշխատանք», 3-րդ կուրսի ուսանողուհի
- 21. Հովհաննիսյան Լիլիթ Գոռի** — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 2-րդ կուրսի ուսանողուհի
- 22. Հարությունյան Ստեփան Մերուժանի** — Ռազմական ամբիոն, «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» 2-րդ կուրսի ուսանող
- 23. Չարչոլյան Արթուր Էդվարդի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող

## ՕՐԱԿԱՐԳ

1. ՇՊՀ «Գիտական տեղեկագրի» գլխավոր խմբագրի գործունեության հաշվետվություն

Հաղ.՝ «Գիտ. տեղ.» գլխ. խմբագիր Ս. Մարգարյան

2. ՇՊՀ ավագ դպրոցի 2017-2018 ուստարվա գործունեության հաշվետվություն

Հաղ.՝ ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն Կ. Դարբինյան

3. ՇՊՀ քոլեջի 2017-2018 ուստարվա գործունեության հաշվետվություն

Հաղ.՝ ՇՊՀ քոլեջի տնօրեն Կ. Այվազյան

4. Ուսանողական գիտական ընկերության հաշվետվություն

Հաղ.՝ ՈԻԳԸ նախագահ Ք. Հարությունյան

5. Տեղափոխվող ակադեմիական պարտքերի վարձավճարի մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

6. Նախորդ տարիների ավարտական քննություններից չատեստավորված ուսանողների 2018-2019 ուստարում ավարտական ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու պայմանների մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն՝ Ն. Ավետիսյան

7. ՇՊՀ-ի նոր մասնագիտությունների (զբոսաշրջություն, իրավագիտություն) լիցենզավորման փաթեթի հաստատման և ԿԳՆ ներկայացնելու մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

8. 2018-2019 ուստարվա հետազոտողի կրթական ծրագրով «Մանկավարժության տեսություն և պատմություն» (դասիչ՝ ԺԳ.00.01) մասնագիտությամբ հայցորդ Գոհար Մայաթի Մինասյանի թեկնածուական ատենախոսության «Սոցիալական էկոլոգիա» առարկայի ուսուցման կարևորությունը հանրակրթական դպրոցներում» թեմայի և մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սպարտակ Մերյոժայի Սողոյանին գիտական ղեկավար հաստատելու մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Մարգարյան

9. 2018-2019 ուստարվա հետազոտողի կրթական ծրագրով «Մանկավարժության տեսություն և պատմություն» (դասիչ՝ ԺԳ.00.01) մասնագիտությամբ հայցորդ Գոհար Մայաթի Մինասյանի ուսումնահետազոտական աշխատանքների պլանի և ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանի հաստատման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն  
Ա. Սարգսյան

**10. Հ.Դրմեյան, Ն.Նազարյան, Ա.Մելքոնյան, «Տիզիկայի դպրոցական դասընթացի լաբորատոր աշխատանքների մեթոդական ուղեցույց (կինեմատիկա և դինամիկա)»-ի տպագրության երաշխավորման մասին**

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն  
Ա. Սարգսյան

**11. 25.09.2018թ.-ի թիվ 25 գիտական խորհրդի նիստում հաստատված «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով վճարովի ուսուցման համակարգում ընդգրկված սովորողների 2018-2019 ուստարվա վարձավճարների զեղչման համակարգի բարելավման մասին» որոշման փոփոխությունների վերաբերյալ**

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

**12. Ընթացիկ հարցեր**

**1. ԼՍԵՑԻՆ՝**

**ՇՊՀ Գիտական տեղեկագրի գլխավոր խմբագրի գործունեության հաշվետվություն**

Պարոն Սարգսյանը ներկայացրեց, որ ՇՊՀ Գիտական տեղեկագիրը սկսել է հրատարակվել 2012թ.-ից՝ Ա և Բ պրակներով: Ա պրակը ներառում է տնտեսագիտական և մաթեմատիկական, Բ-ն՝ հասարակական և հումանիտար մասնագիտություններով գիտական աշխատանքներ: 2013թ.-ին յուրաքանչյուր պրակից հրատարակվել է երկու համար: 2013թ.-ից բուհի որոշմամբ տարեկան մեկ անգամ սկսեց հրատարակվել, որից հետո էլ ամեն տարի մեկ համար է հրատարակվում: Այնուհետև պարոն Սարգսյանը աղյուսակներով գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց և ծանոթացրեց 2012-2018թթ.-ի հրատարակված գիտական հոդվածների քանակին, դրանց հեղինակներին, զծապատկերների միջոցով ներկայացվեցին նաև հոդվածների քանակներն ըստ ամբիոնների:

Պարոն Սարգսյանը ներկայացրեց, որ իր անձնական խնդրանքով գիտական տեղեկագրին իրենց գիտական հոդվածներով անդամակցել են նաև հանրապետության մի շարք անվանի գիտնականներ, որը նպատակաուղղված է եղել տեղեկագրի վարկանիշի բարձացմանը, վերջիններիս աշխատանքները նույնպես աղյուսակների միջոցով ներկայացվեցին :

Պարոն Սարգսյանը նշեց, որ այսօր տեղեկագրի հրատարակման հետ կապված բուհը ֆինանսական խնդիրներ ունի և պարոն Սերոբյանի ու Ա. Սարգսյանի հետ խորհրդակցելուց, ԲՈԿ-ում հարցը քննարկելուց հետո, որոշվել է տեղեկագրի Ա և Բ պրակները միավորել: Նախատեսվում է նաև վերանայել խմբագրական կազմը, ինչպես նաև կազմի գիտական կոչում, աստիճան ունեցող անդամները տարեկան զոնե մեկ գիտական հոդված պետք է ունենան հրատարակված:

Պարոն Սարգսյանը առաջադրեց նաև տարիներ շարունակ իր կողմից բարձրացրած բուհի տպարան ունենալու հարցը, նշեց, որ բուհում ունեն բարձրակարգ մասնագետներ, հատկապես հումանիտար մասնագիտությամբ և նրանց միջոցով կարելի է կազմակերպել հոդվածների հրատարակչական ու սրբագրական աշխատանքները: Այս առումով Արմենուհի Սարգսյանը հետաքրքրվեց, թե հրատարակման աշխատանքների համար պայմանագիր պե՞տք է կնքվի դրսի մասնագետների հետ և արդյո՞ք հնարավոր է նման պայմանագրի կնքումը մեր բուհի աշխատակիցների հետ:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ իր կարծիքով հնարավոր է, եթե բուհի ղեկավարությունը շահագրգիռ լինի:

**Պարոն Սերոբյանի** կարծիքով այս հարցը օրենսդրական դաշտով է ամրակայվում, չնայած ինքը կարծում է, որ խմբագրման, մակետավորման, սրբագրման աշխատանքները բուհի համապատասխան մասնագետների միջոցով իրականացնելու և նրանց հետ պայմանագիր կնքելու հարցի հետ պրոբլեմ չի լինի, իսկ ինչ վերաբերվում է տպարան ունենալուն, ապա իր կարծիքով այն բավականին թանկ հաճույք է և դեռ անհրաժեշտ է հաշվարկել ծախսերը:

## **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

«Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտական տեղեկագրի խմբագրի 2018թ.-ի հաշվետվությունը գնահատել բավարար:

## **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

23 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

## **2. ԼՄԵՑԻՆ՝**

### **ՇՊՀ ավագ դպրոցի 2017-2018 ուստարվա գործունեության հաշվետվություն**

Ավագ դպրոցի տնօրեն պարոն Դարբինյանը նախօրոք էլեկտրոնային նամակի միջոցով հաշվետվությունն ուղարկել էր գիտական խորհրդի անդամներին:

Պարոն Դարբինյանը խոսեց դպրոցի ուսուցչական հանրույթի, աշակերտության թվի, մեթոդ-միավորումների աշխատանքների, դպրոցում կազմակերպված միջոցառումների մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ե. Սերոբյանը**, որը Դարբինյանին հորդորեց դպրոցի պրոբլեմների մասին բարձրաձայնել:

Պարոն Դարբինյանը նշեց, որ այս պահին դպրոցում ուսուցչական և սպասարկող անձնակազմների ծանրաբեռնվածություն կա, հաստիքների ավել թիվը ֆինանսական դժվարություններ է ստեղծում դպրոցում:

**Ս. Սարգսյանը**, որին հետաքրքրում էր, թե ավագ դպրոցի աշակերտներից քանի՞սն են դիմել համալսարան, քանի՞ ուսանող ունեն այս տարի դպրոցի շրջանավարտներից և ինչ ծրագրեր են ներդրվում խնդրի լուծման ուղղությամբ:

Պարոն Դարբինյանը պատասխանեց, որ 2017-2018 ուստարում 47 շրջանավարտներից 15-ը սովորում են ՇՊՀ-ում, աշխատանքներ կատարվում են, որպեսզի շրջանավարտների մեծ մասը դիմեն ՇՊՀ:

**Լ. Մաթևոսյանն** արտահայտվեց, որ ավագ դպրոցի ուսուցիչների մի մասը հակառակը՝ աշակերտներին ուղղորդում են, որ այլ բուհեր դիմեն, ավելացրեց նաև, որ նախորդ տարի բուհի կողմից դասալսումներ են կազմակերպվել դպրոցում, որը չգիտես ինչու չի հրապարակվել, և հարց ուղղեց տնօրենին, թե միգուցե մեր դասախոսների կողմից աջակցություն է պետք դպրոցի ուսուցիչներին:

Պարոն Դարբինյանը նշեց, որ ինքը համամիտ է:

**Ա. Չարչոլյանի** կարծիքով ինչքանով ինքը տեղյակ է համալսարանի ուսանողների վարձավճարից տրամադրվում է նաև դպրոցին պահպանության, ջեռուցման ծախսերը հոգալու համար, այս առումով ի՞նչ ակնկալիքներ ունի համալսարանի ուսանողը դպրոցից:

**Ե. Սերոբյանը** պատասխանելով հարցին նշեց, որ նման պրոբլեմներ ունեն համարյա բոլոր այն բուհերը, որոնք ավագ դպրոցներ ունեն, այո՛, պահպանության ծախսերը բուհի հաշվին է, համալսարանը դպրոցին ավտոբուս է տրամադրել աշակերտների երթևեկության համար, գումար է տրամադրել շրջանավարտների հանար պարապմունքներ անցկացնելու, չնայած իր կարծիքով դպրոցի հոսքային դասարաններում հոսքային առարկաներին 7-8 ժամ է հատկացված և լրացուցիչ պարապմունքների անցկացումը համալսարանի կողմից, իր կարծիքով անհասկանալի է: Պարոն Սերոբյանը հավելեց նաև, որ իսկապես, դպրոցի պրոբլեմը ֆինանսական առումով կապված է ծանրաբեռնված հաստիքների հետ:

**Լ. Մարտիրոսյանի** կարծիքով դպրոցի նկատմամբ պետք է վերաբերմունքը փոխել, անընդհատ շեշտվում է ֆինանսական աջակցության մասին, որը շատ տհաճ է և սոգեղ:

**Ա. Սարգսյանը** հարց ուղղեց պարոն Դարբինյանին, - դպրոցի գրադարանային գրքերի թիվը էլեկտրոնային հաղորդագրության մեջ նշվում է, որ 100-800 է, նրան հետաքրքրում էր այս դինամիկան:

Դարբինյանը պատասխանեց, որ այս պահին ինֆորմացիային չի տիրապետում, կճշտի, կասի:

**Գ. Աղանյանը** հարց ուղղեց, թե ինչպես պետք է լուծվի դպրոցի մարզադահլիճի հարցը:

**Կ. Դարբինյանը** ներկայացրեց, որ անվտանգության առումով փակել են մարզադահլիճը, քանի որ նման պայմաններում դասեր անցկացնելը անհնար է, ֆիզկուլտուրայի դասերն լիարժեք կազմակերպվում են միայն գարնան վերջին և ամառվա սկզբում՝ դպրոցին հարակից բակում:

**Ս. Սարգսյանն** առաջարկեց բուհի մասնագիտական շահագրգիռ ամբիոնների կողմից ծրագրեր մշակել ավագ դպրոցի բացթողումները շտկելու համար, որն էլ միանշանակ կավելացնի դպրոցի շրջանավարտների հոսքը դեպի բուհ:  
Պարոն Սերոբյանն առաջարկեց ՇՊՀ ավագ դպրոցի 2017-2018 ուստարվա գործունեության հաշվետվությունը գնահատել բավարար:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի 2017-2018 ուստարվա հաշվետվությունը գնահատել բավարար:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

23 անդամ. կողմ՝ 20, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 2:

**3. ԼՍԵՑԻՆ՝**

**ՇՊՀ քոլեջի 2017-2018 ուստարվա գործունեության հաշվետվություն**

Քոլեջի տնօրեն տիկին Այվազյանը նախօրոք էլեկտրոնային նամակի միջոցով հաշվետվությունն ուղարկել էր գիտական խորհրդի անդամներին:

Տիկին Այվազյանը ներկայացրեց, որ 2017թ-ի սեպտեմբերին ՇՊՀ-ի կողմից իրենց տրամադրվեց նոր մասնաշենք, որը շատ ողջունելի ու ոգևորիչ էր և ուսուցչական հանրույթի, և ուսանողության կողմից: Այնուհետև տիկին Այվազյանն անդրադարձավ 2017-2018 ուստարվա ընդունելության և պետական քննությունների ամփոփմանը, ուսանողության թվին, ըստ քոլեջի մասնագիտությունների, կուրսերում ուսանողների համալրման հարցերին, ներկայացրեց ՇՊՀ-ի որակի ապահովման կենտրոնի աջակցությամբ քոլեջում ձևավոնված որակի հանձնախմբի և նրա անելիքների մասին: Տիկին Այվազյանը մատնանշեց նաև քոլեջում կազմակերպված միջոցառումներն ու վերջում խոսեց քոլեջի հավատարմագրման համար իրենց կողմից իրականացվող աշխատանքների և անելիքների մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջի 2017-2018 ուստարվա գործունեության հաշվետվությունը, գնահատել բավարար և առաջարկված որոշման նախագիծն ընդունել հիմք՝ արված առաջարկություններով հանդերձ:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

23 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1-3 հարցերում ընդգրկված հաշվետվությունները կցված են արձանագրությանը:

Ա. Սարգսյանը առաջարկեց 4-րդ հարցը՝ ուսանողական գիտական ընկերության հաշվետվությունը տեղափոխել և լսել հաջորդ գիտական խորհրդի նիստի ժամանակ,

քանի որ ՈԻԳԸ-ի նախագահ Քաջիկ Հարությունյանը անկանխատեսված, սակայն հարգելի բացակայում էր նիստից:

#### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

23 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

#### **5. ԼՍԵՑԻՆ՝**

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ քննարկումների արդյունքում առաջարկվում է մտցնել 1 կրեդիտ ժամի միասնական արժեք բոլոր առարկաների համար:

#### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

**Ա. Սարգսյանը**, որին հետաքրքրում էր, թե ինչո՞վ չի բավարարում նախկին կարգը, որով կրեդիտ ժամերի արժեքը հաշվարկվում էր տարբեր առարկաների համար տարբեր արժեքներով:

Պարոն Սերոբյանը նշեց, որ նախկին հաշվարկման սկզբունքը, կարելի է ասել, անհասկանալի էր ու չպատճառաբանված, իր կարծիքով այն պարզ ու հասկանալի պետք է լինի: Պարոն Սերոբյանը առաջարկեց տեղափոխվող ակադեմիական պարտքերի վարձավճարի չափը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի համար հաստատել միասնական արժեքով՝ հաշվարկելով հետևյալ սկզբունքով. տարեկան վարձավճարը բաժանելով ուսումնական ծանրաբեռնվածության տարեկան կրեդիտների վրա (60-ի):

**Բ. Պողոսյանի** կարծիքով նախորդ կարգով յուրաքանչյուր կրթամաս իր կրեդիտն ուներ, իսկ հիմա, կարծես, հակասություն է առաջանում:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Տեղափոխվող ակադեմիական պարտքերի վարձավճարի չափը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի համար հաստատել միասնական արժեքով՝ հաշվարկելով հետևյալ սկզբունքով. տարեկան վարձավճարը բաժանելով ուսումնական ծանրաբեռնվածության տարեկան կրեդիտների վրա (60-ի):

#### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

23 անդամ. կողմ՝ 19, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4:

#### **6. ԼՍԵՑԻՆ՝**

**Նախորդ տարիների ավարտական քննություններից չատեստավորված ուսանողների 2018-2019 ուստարում ավարտական ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու պայմանների մասին**

#### **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

**Նախորդ տարիների ավարտական քննություններին չատեստավորված ուսանողների համար 2018-2019 ուստարում ավարտական ամփոփիչ**



ատեստավորման քննություններին մասնակցելիս պահպանել իրենց ավարտական տարվա ամփոփիչ ատեստավորման ձևը:

### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

23 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

### **7. ԼՍԵՑԻՆ՝**

#### **ՇՊՀ-ի նոր մասնագիտությունների (զբոսաշրջություն, իրավագիտություն) լիցենզավորման փաթեթի հաստատման և ԿԳՆ ներկայացնելու մասին**

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ իրավագիտություն մասնագիտության համար բուհը հեռակա և մագիստրոսական կրթական ծրագրերով լիցենզիա ունի, սակայն բակալավրական ծրագրով չունի, այդ իսկ պատճառով 2016 թ.-ին մեկ անգամ արդեն դիմել է ԿԳ նախարարություն, ներկայացրել մասնագիտության պահանջվող փաթեթը լիցենզիա ստանալույն հարցով, սակայն մերժել են, պատճառաբանելով, որ հայոց պատմություն և հայոց լեզու առարկաների համար նախատեսված է եղել 1 կրեդիտ: Պարոն Սերոբյանը շարունակեց, որ այժմ իրավագիտություն (բակալավր) մասնագիտության ուսումնական պլանները շտկվել են և այն ներկայացվում է գիտական խորհրդում : Պարոն Սերոբյանը շարունակեց, որ միաժամանակ գիտխորհրդի քննարկմանն է ներկայացվում նաև նոր մասնագիտության՝ զբոսաշրջության լիցենզավորման փաթեթը:

### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

Ա. Սարգսյանի կարծիքով, լիցենզավորման գործընթացի հետ կապված պետք է հետազոտել ոլորտը, որպեսզի բուհի հավատարմագրման ժամանակ այն իրապես հիմնավորվի, հատկապես, որ ինքը լսել է նաև պարոն Թոփչյանի կարծիքը այս հարցի կետ կապված, որով նա հաստատել է այն:

**Լ. Մարտիրոսյանին** հետաքրքրում էր թե զբոսաշրջությունը որ ամբիոնն է իրականացնելու:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ սերվիսը:

Լ. Մարտիրոսյանը նշեց, որ նախկին ռեկտորը ինքն էլ ընդունել է, որ սխալ է եղել սերվիսը աշխարհագրության ամբիոնից առանձնացնելը և իր կարծիքով զբոսաշրջությունը պետք է ներառվի աշխարհագրության ամբիոնում: Այնուհետև պարոն Մարտիրոսյանը շարունակեց, որ 30 տարի այս ոլորտում աշխատում են և մասնագիտությունը տանում ներառում են միջմշակութային ամբիոնի կազմի մեջ, ինքը ոչ մի խնդիր չունի ամբիոնի վարիչի հետ, նույնիսկ զբոսաշրջության լիցենզավորման փաթեթը կազմելիս միասին են աշխատել, սակայն իր կարծիքով սխալ է զբոսաշրջությունը աշխարհագրությունից առանձնացնելը և ընդհանրապես բուհում կառուցվածքային փոփոխություններ են անհրաժեշտ:

**Պարոն Սերոբյանը** նշեց, որ ինքն էլ է համաձայն, որ կառուցվածքային փոփոխությունների կարիք կա, սակայն լիցենզիաների հաստատման հարցի

լուծումից հետո հնարավոր կլինի Պարոն Մարտիրոսյանի բարձրաձայնած հարցի  
լուծմանն անդրադառնալ:

Իրավագիտության ամբիոնի վարիչ Ա. Հայրապետյանի կողմից ներկայացվեց  
իրավագիտություն մասնագիտության (բակալավրի կրթական ծրագրով)

լիցենզավորման փաթեթը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

**Կ. Պետրոսյանը**, որը նշեց, որ ինքը թեև ողջունում է, որ բուհում նոր  
մասնագիտություն կավելանա, սակայն կարծում է, որ բուհում տիրող իրավիճակի  
ներկա խմորման պայմաններում պետք է ճիշտ կողմնորոշվել, քանի, որ պատմության  
և փիլիսոփայության ամբիոնի վարիչ պարոն Խորիկյանը գիտխորհրդի օրակարգը  
հրապարակելուց հետո իրեն գրել է, որ այս հարցերը գտնվում են քննչական  
գործընթացում և լիցենզավորման հարց չի կարող լուծվել մինչև քննությունը  
չավարտվի: Տիկին Պետրոսյանը նշեց, որ արդյոք ունեն երաշխիքներ, որ  
հետագայում չեն հայտնվի իրարամերժ գործընթացների մեջ և իր կարծիքով  
գիտական խորհրդի անդամները պետք չէ, որ ներքաշվեն նման գործընթացների մեջ:

**Ա. Հայրապետյանը** նշեց, որ լիցենզիայի փաթեթը կազմելիս ամեն ինչ քննարկվել է և  
իր կարծիքով բոլոր հիմնահարցերը ճշտված են:

Զբոսաշրջության փաթեթը ներկայացրեց Շ. Տեր-Ադամյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հաստատել նոր մասնագիտությունների (զբոսաշրջություն, իրավագիտություն)  
ուսումնական պլանները, լիցենզավորման փաթեթը ներկայացնել ԿԳՆ:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

23 անդամ. կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

## **8. ԼՍԵՑԻՆ՝**

2018-2019 ուստարվա հետազոտողի կրթական ծրագրով «Մանկավարժության  
տեսություն և պատմություն» (դասիչ ԺԳ.00.01) մասնագիտությամբ հայցորդ Գոհար  
Սայաթի Մինասյանի թեկնածուական ատենախոսության ««Սոցիալական էկոլոգիա»  
առարկայի ուսուցման կարևորությունը հանրակրթական դպրոցներում» թեմայի և  
մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սպարտակ Մերյոժայի  
Սողոյանին գիտական ղեկավար հաստատելու մասին

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Հաստատել մանկավարժության ամբիոնի հայցորդ Գոհար Սայաթի Մինասյանի  
թեկնածուական ատենախոսության՝ ««Սոցիալական էկոլոգիա» առարկայի  
ուսուցման կարևորությունը հանրակրթական դպրոցներում» թեման ((ԺԳ.00.01)  
«Մանկավարժության տեսություն և պատմություն» - մասնագիտությամբ):

2. Գիտական ղեկավար հաստատել մանկավարժական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Սպարտակ Մերյոժայի Սողոյանին:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

23 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

## **9. ԼՍԵՑԻՆ՝**

2018-2019 ուստարվա հետազոտողի կրթական ծրագրով «Մանկավարժության տեսություն և պատմություն» (դասիչ՝ ԺԳ.00.01) մասնագիտությամբ հայցորդ Գոհար Սայաթի Մինասյանի ուսումնահետազոտական աշխատանքների պլանի և ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանի հաստատման մասին

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հաստատել հետազոտողի կրթական աստիճանի «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտության (դասիչ՝ ԺԳ.00.01) մանկավարժության ամբիոնի հայցորդ Գոհար Սայաթի Մինասյանի ուսումնահետազոտական աշխատանքների և ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանները:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

23 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

## 10. ԼՍԵՑԻՆ՝

Հ.Դրմեյան, Ն.Նազարյան, Ա.Մելքոնյան, «Ֆիզիկայի դպրոցական դասընթացի լաբորատոր աշխատանքների մեթոդական ուղեցույց (կինեմատիկա և դինամիկա)»-ի տպագրության երաշխավորման մասին

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հիմք ընդունելով արտաքին գրախոսման դրական կարծիքները՝ Հ. Դրմեյանի, Ն.Նազարյանի, Ա. Մելքոնյանի, «Ֆիզիկայի դպրոցական դասընթացի լաբորատոր աշխատանքների մեթոդական ուղեցույց (կինեմատիկա և դինամիկա)» վերտառությամբ աշխատությունը երաշխավորել տպագրության:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

23 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

## 11. ԼՍԵՑԻՆ՝

25.09.2018թ.-ի թիվ 25 գիտական խորհրդի նիստում հաստատված «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով վճարովի ուսուցման համակարգում ընդգրկված սովորողների 2018-2019 ուստարվա վարձավճարների զեղչման համակարգի բարելավման մասին» որոշման փոփոխությունների վերաբերյալ

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Ի լրումն և ի փոփոխումն 25.09.2018թ.-ի թիվ 25 գիտական խորհրդի նիստում հաստատված «Բակալավրի եվ մագիստրոսի կրթական ծրագրերով վճարովի ուսուցման համակարգում ընդգրկված սովորողների 2018-2019 ուստարվա վարձավճարների զեղչման համակարգի բարելավման մասին» որոշման՝ 3.6.7 և 3.6.12 կետերում կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

3.6.7 Մարտական հերթապահություն իրականացնող զորամասում մարտական հերթապահության կամ գործողության մեջ ընդգրկված պարտադիր զինվորական ծառայություն անցած ուսանողներին,

կետը այսուհետ. Մարտական հերթապահություն իրականացնող զորամասում մարտական հերթապահության կամ գործողության մեջ ընդգրկված պարտադիր զինվորական ծառայություն անցած ուսանողներին, *ինչպես նաև պայմանագրային զինծառայության ընթացքում ապրիլյան հերթապահություն իրականացրած կամ ապրիլյան գործողություններին մասնակից ուսանողներին*

- *մարտական հերթապահություն՝ 30% զեղչ, ապրիլյան պատերազմում մարտական հերթապահություն՝ 50% զեղչ, մարտական գործողություն՝ 70% զեղչ,*

3.6.12 Համալսարանի ռեկտորի, մանդատային հանձնաժողովի առաջարկությամբ և գիտական խորհրդի որոշմամբ ուսման վարձ մասնակի փոխհատուցում է տրամադրվում առանձնահատուկ դեպքերում այլ կարգավիճակ ունեցող և ուսանողի՝ բակալավրի կրթական ծրագրով 86 և ավելի, մագիստրոսականաով՝ 91 և ավելի ՄՈԳ-ի պարագայում,- կետը այսուհետ.

*Համալսարանի ռեկտորի, մանդատային հանձնաժողովի առաջարկությամբ և որոշմամբ ուսման վարձ մասնակի փոխհատուցում է տրամադրվում առանձնահատուկ դեպքերում՝ այլ կարգավիճակ ունեցող բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրով սովորող ուսանողներին:*

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

23 անդամ. կողմ՝ 21, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1:

Գիտական խորհրդի նախագահ՝  
Գիտական խորհրդի  
քարտուղար՝  
Արհմիութենական  
կազմակերպության նախագահ՝  
Բնագիտամաթեմատիկական  
ֆակուլտետի դեկան՝  
Սոցիալական գիտությունների և  
իրավունքի ֆակուլտետի դեկան՝  
Ռազմական ամբիոնի պետ՝  
Ուսումնագիտական  
խորհրդատվական կենտրոն-  
գրադարանի տնօրեն՝  
Արտաքին համագործակցության  
և հասարակայնության հետ  
կապերի կենտրոնի տնօրեն՝  
Ֆինանսատնտեսական  
վերլուծությունների,  
ծրագրավորման և  
հաշվապահական հաշվառման  
բաժնի վարիչ-գլխավոր  
հաշվապահ՝  
Անձնակազմի կառավարման և  
իրավական ապահովման բաժնի  
պետ  
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և  
տեղեկատվական  
տեխնոլոգիաների ամբիոնի  
պրոֆեսոր՝  
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և  
տեղեկատվական  
տեխնոլոգիաների ամբիոնի  
պրոֆեսոր՝  
Անգլերեն լեզվի և  
գրականության ամբիոնի  
պրոֆեսոր՝  
Հայոց լեզվի և գրականության  
ամբիոնի դոցենտ՝  
Մանկավարժության ամբիոնի  
պրոֆեսոր՝

Ե. Սերոբյան  
Կ. Պետրոսյան  
Վ. Խաչատրյան  
Բ. Պողոսյան  
Օ. Հովհաննիսյան  
Ա. Մկրտչյան  
Թ. Խաչատրյան  
Հ. Մելքոնյան  
Ռ. Քալաջյան  
Ա. Հովհաննիսյան  
Ս. Սարգսյան  
Հ. Դրմեյան  
Ա. Հովհաննիսյան  
Ս. Հայրապետյան  
Ռ. Մարդոյան

Հումանիտար գիտությունների և  
արվեստի ֆակուլտետի դեկան՝  
Միջմշակութային  
հաղորդակցության և  
զբոսաշրջության ամբիոնի  
ասիստենտ՝  
Մանկավարժության ամբիոնի  
դոցենտ՝  
Պատմության և  
փիլիսոփայության ամբիոնի  
դոցենտ  
Մանկավարժության ամբիոնի  
դոցենտ՝  
Գիտական  
քաղաքականության, որակի  
ապահովման և կառավարման  
կենտրոնի տնօրեն՝  
Աշխարհագրության,  
կենսաբանության և քիմիայի  
ամբիոնի դոցենտ՝  
ՇՊՀ ՈԻԽ նախագահի ԺՊ,  
Հումանիտար գիտությունների և  
արվեստի ֆակուլտետ,  
«Լրագրություն» 4-րդ կուրսի  
ուսանողուհի՝  
Սոցիալական գիտությունների և  
իրավունքի ֆակուլտետ,  
«Սոցիալական աշխատանք» 4-  
րդ կուրսի ուսանողուհի՝  
Անգլերեն լեզու և  
գրականություն IV կուրսի  
ուսանողուհի՝  
Մանկավարժության  
ֆակուլտետ, «Մեթոդիկա» 4-րդ  
կուրսի ուսանողուհի  
Բնագիտամաթեմատիկական  
ֆակուլտետ,  
«Աշխարհագրություն» 4-րդ  
կուրսի ուսանողուհի

Թ. Մելիքյան

Շ. Տեր-Աղամյան

Լ. Ղուկասյան

Հ. Խորիկյան

Լ. Հակոբյան

Ա. Սարգսյան

Լ. Մարտիրոսյան

Ջ. Ղազարյան

Ա. Խաչատրյան

Հ. Ավետիսյան

Է. Ավագյան

Լ. Հովհաննիսյան

ՈւԳԸ նախագահ,  
աշխարհագրություն II կուրսի  
ուսանող (մագիստրատուրա)՝

Ռազմական ամբիոն,  
«Նախագորակոչային և  
Ֆիզիկական պատրաստություն»  
4-րդ կուրսի ուսանող՝  
Պատմություն IV կուրսի  
ուսանող (հեռակա  
բակալավրիատ)

Ք. Հարությունյան

Ս. Հարությունյան

Ա. Չարչոլյան